ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ
ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2018Թ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

Երևան - 2019

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ.....3

1. ԳՈՒՅՔԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՈՒՄ.....4
2. ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅՈՒՆ.....7
3. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ.....9
4. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐ.....10

ՆԱԽԱԲԱՆ

Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), հանդիսանալով կոռուպցիայի կանխարգելման մարմին, ունի հիմնական դերակատարում (1) պաշտոնատար անձանց ֆինանսական հայտարարագրման և (2) բարեվարքության համակարգերի ներդրման և զարգացման գործում:

Հայտարարագրման համակարգի ներդրման նպատակներից է հայտարարագրված գույքի և եկամուտների վերաբերյալ տվյալների համադրման և դրանց տարբերությունների դիտարկման միջոցով պաշտոնեական դիրքի չարաշահումների միջոցով ապօրինի հարստացման ռիսկերի բացահայտումն է և կոռուպցիոն գործեր քննող մարմինների կողմից դրանց հետագա քննության ապահովումը:

Հանրային էթիկայի համակարգի ներդրման նպատակն է զարգացնել պետական մարմինների՝ իրենց գործունեությունը արհեստավարժության, հաշվետվողականության, արժեքների (էթիկայի նորմերի) և համագործակցության հիման վրա կազմակերպելու մշակույթը, ինչը կբացառի անձնական շահերից ելնելով կամ դրանց սպասարկման համար որոշումների կայացումը: Շահերի բախման իրավիճակները կառավարելու, բացահայտելու և կանխելու միջոցով կարելի է հասնել հանրային ինստիտուտներում հիմնավոր և արդար որոշումների կայացման՝ ի շահ պետության և հասարակության, ինչը կնպաստի հանրային կառավարման նկատմամբ վստահության բարձրացմանը:

1. ԳՈՒՅՔԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՈՒՄ

2018 թվականին Հանձնաժողովը հայտարարագրերի ռեեստրում կատարել է հայտարարատու պաշտոնատար անձանց պաշտոնի նշանակման, ազատման վերաբերյալ շուրջ 5400 գրառում: Նույն ժամանակահատվածում Հանձնաժողովն ընդունել է 11124 հայտարարագրեր[1], որոնք բոլորը հրապարակվել են:

Հայտարարատու պաշտոնատար անձանց ընդհանուր թիվը 2017թ. և 2018թ. համար



Պաշտոնատար անձանց ընտանիքի կազմի մեջ մտնող անդամների ընդհանուր թիվը 2017թ. և 2018թ. համար



Հայտարարատու պաշտոնատար անձանց և նրանց ընտանիքի կազմի մեջ մտնող անձանց կողմից 2017թ. և 2018թ. ներկայացված հայտարարագրերի ընդհանուր թիվն՝ ըստ հայտարարագրերի տեսակների.

[1] Նախորդ տարվա համեմատ ներկայացված հայտարարագրերի թիվը աճել է շուրջ երկուսուկես անգամ, իսկ 2016թ. համեմատ՝ հինգ անգամ:



2018 թվականին հայտարարատու պաշտոնատար անձանց կողմից ուշ ներկայացված հայտարարագրերի թիվը կազմում է 2002, որը կազմում է ներկայացված հայտարարագրերի շուրջ 18 տոկոսը:

2017 թվականի տարեկան հայտարարագիր չներկայացրած պաշտոնատար անձանց թիվը կազմում է 2-ը: 2018 թվականին պաշտոնի ստանձնման հայտարարագիր չի ներկայացրել 32 հայտարարատու պաշտոնատար անձ, իսկ դադարեցման հայտարարագիր՝ 112: Հայտարարագիր չներկայացրած կամ ժամկետի խախտմամբ ներկայացրած պաշտոնատար անձանց ցուցակները և այդ կապակցությամբ ձեռնարկված քայլերի վերաբերյալ տեղեկությունները պարբերաբար ներկայացվել են Հանձնաժողովի կայքէջում:

2018 թվականին Հանձնաժողովը ստացել է հայտարարագրում ուղղումներ կատարելու վերաբերյալ շուրջ 530 դիմում: Հայտարարագրված տվյալների առնչությամբ բարձրաստիճան պաշտոնատար անձանցից պահանջվել և ստացվել են ավելի քան 65 պարզաբանումներ:

Հայտարարագրերի վերլուծության, ինչպես նաև լրատվամիջոցների՝ հայտարարագրման ենթադրյալ խախտումների վերաբերյալ հրապարակումներում, քաղաքացիների դիմումներում ներկայացված հանգամանքների ստուգման արդյունքներով 2018 թվականին Հանձնաժողովի կողմից հարուցվել է վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի 419 վարույթներ, որոնցից 256 հայտարարագրերն օրենքով սահմանված ժամկետներում չներկայացնելու, 151-ը՝ հայտարարագրում անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելու, իսկ 12-ը հայտարարագրի լրացման կարգի խախտման առերևույթ հատկանիշներով:

Հարուցված վարույթների արդյունքում 219 պաշտոնատար անձ ենթարկվել է «նախազգուշացում» վարչական տույժի, 68-ի նկատմամբ կիրառվել է «տուգանք» վարչական տույժը, 122-ի դեպքում գործի վարույթը կարճվել է, 8 պաշտոնատար անձի նկատմամբ գործի վարույթը կասեցվել է, իսկ 2 վարչական ակտ ճանաչվել է առոչինչ:



2018 թվականի ընթացքում Հանձնաժողովի վարչական ակտերի դեմ Հանձնաժողով է ներկայացվել 5 վարչական բողոք (գանգատ), որոնցից մեկը վերադարձվել է, մեկի վերաբերյալ որոշում է կայացվել Հանձնաժողովի որոշումը թողնել անփոփոխ, իսկ դրա դեմ գանգատն՝ առանց բավարարման, մեկ դեպքում Հանձնաժողովի որոշումը բեկանվել է և գործը կարճվել, իսկ երկու դեպքում՝ վարչական բողոքը թողնվել է առանց քննարկման:

2018 թվականի ընթացքում Հանձնաժողովի՝ վարչական տույժ կիրառելու մասին որոշումների/գործողությունների դեմ ՀՀ վարչական դատարան է մուտքագրվել 12 հայցադիմում: Բոլոր գործերով Հանձնաժողովը՝ որպես վարչական գործերով պատասխանող, հայցապահանջների վերաբերյալ ներկայացրել է գրավոր պատասխաններ: Գործերի քննությունն ընթացքի մեջ է: Համապատասխան

տեղեկատվությունը զետեղված է «Դատալեքս» դատական-տեղեկատվական համակարգի շտեմարանում:

Հանձնաժողովն իրավապահ մարմիններից ստացված 21 գրությունների շրջանակներում համագործակցել է ՀՀ քննչական կոմիտեի, Հատուկ քննչական ծառայության և Ազգային անվտանգության ծառայության հետ՝ աջակցելով գործերի քննությանը:

Վարչական վարույթների արդյունքներով 2 պաշտոնատար անձանց կողմից 2017 թվականի (տարեկան) հայտարարագիրը Հանձնաժողով դիտավորությամբ չներկայացնելու առերևույթ հատկանիշներով նյութերը, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքին համապատասխան, ուղարկվել են ՀՀ գլխավոր դատախազություն:

Ապօրինի հարստանալու վերաբերյալ գործերով Գլխավոր դատախազության հետ արդյունավետ համագործակցելու նպատակով միջազգային փորձագետների ներգրավմամբ մշակվել է փոխգործակցության աշխատանքային փաստաթուղթ:

ՀՀ կենտրոնական դեպոզիտարիայից և Վարկային բյուրոներից առցանց տվյալների ստացման նպատակով Հանձնաժողովը ՀՀ կենտրոնական բանկի հետ ստորագրել է համատեղ որոշում հիշյալ կազմակերպություններից հայտարարագրերի վերլուծության առնչությամբ առցանց եղանակով տվյալների ստացման վերաբերյալ: Հստակեցվել են ստացվելիք տվյալների ձևաչափը, եղանակները: Համակարգերի փոխգործարկելիությունն ապահովող տեխնիկական լուծումները տրված են:

Համանման նախապատրաստական աշխատանքներ են իրականացվել նաև ՀՀ աշխատանքի ու սոցիալական հարցերի նախարարության «էլ.-կենսաթոշակ և ընտանիքների անապահովության գնահատում» և «Էլեկտրոնային նպաստ» տեղեկատվական համակարգերի շտեմարաններից տվյալների առցանց եղանակով ստացման ուղղությամբ:

2. ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅՈՒՆ

Հանձնաժողովն իրականացրել է «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով և հանրային ծառայության առանձին ոլորտների առանձնահատկությունները սահմանող օրենքներով էթիկայի, շահերի բախման, գործունեության սահմանափակումների և այդ առնչությամբ պատասխանատվության միջոցների կիրառման օրենսդրական կարգավորումների վերաբերյալ» թեմայով համալիր վերլուծություն:

Հանրային ծառայության ոլորտը կանոնակարգող 22 ոլորտային օրենքների համեմատական վերլուծության միջոցով վեր են հանված հանրային ծառայողների և բարձրաստիճան պաշտոնատար անձանց շահերի բախման և գործունեության սահմանափակումների՝ գործող իրավակարգավորումների բացերն ու խնդիրները: Հանրային ծառայության ոլորտը կարգավորող հիմնական և ոլորտային օրենքներում միասնական և ներդաշնակեցված քաղաքականություն ապահովելու համար Կառավարություն են ներկայացվել առաջարկություններ:

Հանձնաժողովն իրականացրել է «Բարձրաստիճան պաշտոնատար անձանց շահերի բախումը. օրենսդրություն և պրակտիկա» թեմայով ուսումնասիրություն, որի շրջանակում 2181 հայտարարագրի և այլ աղբյուրների ուսումնասիրությամբ դուրս են

բերվել բարձրաստիճան պաշտոնատար անձանց և նրանց հետ փոխկապակցված անձանց մասնակցությամբ 841 առևտրային կազմակերպությունների տվյալներ: Պարզվել է, որ 2014-2017թթ. ժամանակահատվածում բարձրաստիճան պաշտոնատար անձանց և նրանց հետ փոխկապակցված անձանց մասնակցությամբ 91 առևտրային կազմակերպություն ճանաչվել է գնումների հաղթող: Նրանց հետ կնքվել է 709 պայմանագիր: Ուսումնասիրված 709 պայմանագրերից 99-ում (14%) առկա է շահերի առերևույթ բախման իրավիճակ. բարձրաստիճան պաշտոնատար անձանց կամ նրանց հետ փոխկապակցված անձանց մասնակցությամբ կազմակերպությունները հաղթող են ճանաչվել այն մարմինների գնումների մրցույթներում, որտեղ անձը պաշտոն է զբաղեցրել: Նշված պայմանագրերում թեև բացակայել են բարձրաստիճան պաշտոնատար անձանց ստորագրությունները, այդուհանդերձ, մրցույթների իրականացման և հաղթող մասնակիցների որոշման գործընթացում նրանց շահագրգիռ միջամտության հնարավորությունը չպետք է բացառել ինչպես հորիզոնական, գործընկերային հարաբերությունների, այնպես էլ՝ վերադասի լիազորությունների իրացման միջոցով, ինչի մասին են վկայում ընդհանուր օրինաչափությունից շեղումները: Ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ շահերի բախման գործող օրենսդրական կարգավորումները նեղ են և լիարժեք չեն արտացոլում իրական ռիսկերը: Արդյունքում, բազմաթիվ իրավիճակներ չեն նույնականացվում որպես շահերի բախում և որևէ իրավական հետևանք չեն առաջացնում: Ուսումնասիրության արդյունքներով Կառավարություն են ներկայացվել բարձրաստիճան պաշտոնատար անձանց շահերի բախման կանխարգելմանն ուղղված առաջարկություններ: Հանձնաժողովի կայքէջում հրապարակվել է 2014-2017թթ. ժամանակահատվածում պետական գնումների հաղթող ճանաչված այն առևտրային կազմակերպությունների ցանկը, որոնցում բարձրաստիճան պաշտոնատար անձինք և նրանց հետ փոխկապակցված անձինք ունեն (ունեցել են) մասնակցություն:

Հանձնաժողովն իրականացրել է շահերի բախման առնչվող հարցերով միջազգային փորձի ուսումնասիրություն և օրենսդրության կատարելագործմանն ուղղված առաջարկություններով ներկայացրել ՀՀ արդարադատության նախարարություն և Կառավարություն:

Թեև օրենքով անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների վերաբերյալ դրույթների մեկնաբանությունը վերապահված է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին, Հանձնաժողովն անպատասխան չի թողել այդ առնչությամբ համապատասխան օրինադրույթների բովանդակության պարզաբանման կապակցությամբ ներկայացված շուրջ մեկ տասնյակ դիմումները: Դրանք, մասնավորապես, վերաբերել են կամավոր հիմունքներով հայտարարագրմանը, հասարակական հիմունքներով պաշտոնավարող անձանց հայտարարագման պարտականությանը, այլ վճարովի աշխատանքին, անմիջական ենթակայությանն ու վերահսկողությանը, հանրային ծառայողի կողմից պատգամավորի թեկնածու առաջադրվելուն, պաշտոնյայի համատեղ աշխատանքին և այլն:

2018 թվականի ընթացքում Հանձնաժողովը քննարկել է էթիկայի կանոնների առերևույթ խախտումների և շահերի առերևույթ բախման վերաբերյալ 7 դիմում-

բողոքներ և Հանձնաժողովի գործունեությանն առնչվող այլ հարցերով 101 դիմում (հարցում):

2018թ. ՀՀ պետական եկամուտների կամիտեի հետ համատեղ կազմակերպվել է հարկային և մաքսային ծառայողների համար հակակոռուպցիոն և բարեվարքության (հանրային էթիկա) թեմաներով վերապատրաստման 66 դասընթաց, որոնց մասնակցել են 1021 հարկային և մաքսային ծառայողներ:

2018թ. ՀՀ արդարադատության ակադեմիայում «Հանրային ծառայության ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի արդի հարցերը» դասընթացի շրջանակներում «Հանրային էթիկա» թեմայով վերապատրաստվել են 45 դատավոր և 46 դատախազ:

3. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ

Հանձնաժողովն ակտիվ մասնակցություն է ունեցել 2018 թվականին ընդունված «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի և «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծերի մշակման գործընթացին:

Արդյունքում՝ կատարված օրենսդրական փոփոխություններով ապահովվել է կոռուպցիայի կանխարգելումը՝ ֆինանսական անկախությամբ օժտված մարմնի կողմից՝ ընդլայնված գործառույթներով և գործիքակազմով: Մասնավորապես՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին են վերապահվել նաև պետական պաշտոն զբաղեցնող և համայնքային ծառայության առանձին պաշտոններ զբաղեցնող անձանց կողմից «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների պահպանմանը հետևելու, հանրային պաշտոն և հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի սկզբունքների մեկնաբանման, ինչպես նաև հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնների պահպանման միասնականությունն ապահովելու գործառույթները: Ներդրված վերանայման վարույթի շրջանակում նոր Հանձնաժողովին լիազորություն է վերապահվել վերանայելու անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների խախտումների վերաբերյալ հանրային ծառայողների էթիկայի հանձնաժողովների եզրակացությունները՝ ապահովելու համար էթիկական չափորոշիչների միատեսակ մեկնաբանությունն ու կիրառությունը:

«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով ընդլայնվել է հայտարարատու պաշտոնատար անձանց շրջանակը՝ ներառելով նաև պետական հայեցողական պաշտոններ զբաղեցնող անձանց:

Միասնականացվել է հայտարարագրի բովանդակությունը՝ ներառելով այնպիսի տվյալներ, որոնք հնարավորություն կընձեռեն վերհանել ապօրինի հարստանալու ռիսկերը և կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման նպատակով համագործակցել իրավապահ մարմինների հետ: Գույքի ձեռքբերման (օտարման) գործարքների մասով վերացվել են օրենքով սահմանված գումարային/արժեքային շեմերը:

Հայտարարատու պաշտոնատար անձի պաշտոնը ստանձնելու/դադարեցնելու հայտարարագրում իրենց փաստացի գույքային դրության,

իսկ տարեկան հայտարարագրում՝ դրամական միջոցների վերաբերյալ տվյալներ ներկայացնելու պարտականություն է սահմանվել հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի բոլոր անդամների համար:

Հանրային ծառայության ոլորտում ներդրվել է բարեվարքության համակարգ, համաձայն որի՝ հանրային պաշտոն և հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող անձինք պարտավոր են հետևել օրենքով ամրագրված վարքագծի սկզբունքներին, անհամատեղելիության պահանջներին, այլ սահմանափակումներին, շահերի բախման կարգավորումներին:

Արմատական վերանայվել է նվերների ինտիտուտը՝ պաշտոնեական (ծառայողական) պարտականությունների իրականացման հետ կապված նվերներ ընդունելու արգելքի լույսի ներքո, նախատեսվել է նվերների հաշվառման և հանձնման կարգ: Սահմանվել են պատասխանատվության միջոցներ շահերի բախման կարգավորումներին չհետևելու, անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների խախտումների համար: Ներդրվել է բարեվարքության հարցերով կազմակերպիչների ինստիտուտը, օրենսդրական մակարդակում ամրագրվել են բարեվարքության հարցերով կազմակերպիչների լիազորությունները, ինչպես նաև հանրային ծառայողների էթիկայի հանձնաժողովների գործառույթները:

«Հանրային ծառայության մասին» ՀՀ նոր օրենքով շահերի բախման կարգավորումները տարածվել են ոչ միայն բարձրաստիճան պաշտոնատար անձանց, այլև պաշտոնյաների ավելի լայն շրջանակի՝ պետական պաշտոն զբաղեցնող անձանց, 15000 և ավելի բնակչություն ունեցող համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց, ինչպես նաև հանրային ծառայողների նկատմամբ:

Օրենքով ընդլայնվել է շահերի բախման իմաստով փոխկապակցված անձանց շրջանակը՝ պաշտոն զբաղեցնող անձի ամուսինը, պաշտոն զբաղեցնող անձի կամ նրա ամուսնու զավակը, ծնողը, քույրը, եղբայրը, պապը, տատը, թոռը, մորաքույրը, հորաքույրը, հորեղբայրը, մորեղբայրը, քրոջ, եղբոր զավակները, պաշտոն զբաղեցնող անձի մորաքրոջ, հորաքրոջ, հորեղբոր, մորեղբոր զավակները, քրոջ, եղբոր, զավակի ամուսինները:

Օրենքով ներդրվել են շահերի բախման իրավիճակների կառավարման նոր կառուցակարգեր:

4. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐ

Համաձայն Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության Ստամբուլյան հակակոռուպցիոն ցանցի գործողությունների ծրագրի 4-րդ փուլի արդյունքների վերաբերյալ զեկույցի՝ Հայաստանի 21 հանձնառություններից ամբողջությամբ իրականացվել են 3-ը, հիմնականում՝ 8-ը, մասամբ՝ 10-ը: Ամբողջությամբ իրականացված 3 հանձնառություններից երկուսն առնչվում են Հանձնաժողովին: Մասնավորապես, հանձնառություն 10-ով նախատեսված էր.

- Հանձնաժողովին օժտել ակտիվների հայտարարագրերի արժանահավատության ստուգման լիազորություններով և կարողություններով […].
- Հանձնաժողովին տրամադրել բյուջետային անկախություն, որը կապահովի անհրաժեշտ ռեսուրսներ.
- պատվիրակել Հանձնաժողովին կամ մեկ այլ մարմնին՝ խթանելու և վերահսկելու հանրային ծառայության ստանդարտներն ու գործնական կիրառումը հանրային կառավարման ողջ համակարգում:

Վերոնշյալ հանձնառության իրականացման մասով զեկույցում արձանագրված է, որ 3 տարիների ընթացքում շարունակական ջանքերի ներդրման, ինչպես նաև ուժեղ առաջնորդության շնորհիվ Հանձնաժողովը կարողացել է ամբողջությամբ կատարել վերոնշյալ հանձնառությունը: Մասնավորապես, Հանձնաժողովը սահմանափակ մանդատ պայմաններում ակտիվ է գործել հանրային ոլորտի բարեվարքության ընդհանուր չափորոշիչների խթանման/նպաստման հարցում, հրապարակել է նաև գույքի, եկամուտների հայտարարագրերի լրացման և ներկայացման (հանձնման) ուղեցույց, հանրային ծառայության էթիկայի ձեռնարկ և մի շարք այլ ուսումնասիրություններ կոռուպցիայի, շահերի բախման, գույքի և եկամուտների հայտարարագրման թեմաների շուրջ: Հանձնաժողովը մշակել և ներկայացրել է իր ռազմավարությունը, վերջինիս իրականացման միջոցառումների ծրագիրը, ինչպես նաև Արդարադատության նախարարության, այլ պետական մարմինների և քաղաքացիական հասարակության հետ համագործակցության արդյունքում ունեցել է մեծ դերակատարում «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի, գույքի և եկամուտների հայտարարագրմանը, շահերի բախմանը առնչվող և այլ իրավական ակտերի մշակման գործընթացում:

Մոնիթորիգի թիմն ընդգծել է նաև Հանձնաժողովի ներկայացուցիչների արհեստավարժության բարձր մակարդակը, Հայաստանին գովաբանել արձանագրած առաջընթացի համար և խրախուսել շարունակել այս ձեռքբերումները՝ վերջին տարիներին ձեռք բերված ինստիտուցիոնալ հիշողության վրա:

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ստեղծման գաղափարը զեկույցում գնահատվել է որպես ողջունելի նախաձեռնություն: Կարևորվել է անցումային գործընթացում բացեր չառաջացնելու հրամայականը:

Հիշյալ զեկույցի հանձնառություն 14-ը պահանջում էր.

- մշակել շահերի բախմանն ու հայտարարագրմանն առնչվող հստակ իրավական նորմեր տարբեր կատեգորիաների հանրային պաշտոնյաների համար՝ կարևորելով բարձր ռիսկային ոլորտները, ինչպիսիք են հանրային գնումների ընթացակարգը և վերադաս չունեցող պետական պաշտոնյաներին.
- անհապաղ ուսումնասիրել «Հանրային ծառայության մասին» օրենքի կիրարկումն ու բացահայտել անհամապատասխանություններն «Ազգային ժողովի կանոնակարգ» օրենքում, «Քաղաքացիական ծառայության մասին», «Սահմանադրական դատարանի մասին», «Դատախազության մասին» ՀՀ օրենքներում, ՀՀ դատական օրենսգրքում, ինչպես նաև վերանայել օրենսդրությունը՝ նշված թերությունները վերացնելու համար:

Վերոնշյալ հանձնառության իրականացման վերաբերյալ մոնիթորինգի թիմը եզրահանգել է, որ Հայաստանն ընդունել է շահերի բախման վերաբերյալ նոր

կարգավորումներ, որոնք ուղղված են վերհանված բացերի վերացմանը: Նոր կարգավորումներն ամրապնդել են վերահսկողության կառուցակարգերն այդ ոլորտում: Մոնիթորգի թիմը խրախուսել է Հայաստանին աշխատել նոր ընդունված կարգավորումներով, բարձրացնել հանրային պաշտոնյաների իրազեկվածությունը և կիրարկել կանոնները գործնականում:

ԳՐԵԿՈ-ի գնահատման 4-րդ փուլի պարտավորությունների կատարման վերաբերյալ զեկույցը ևս ներառում է Հանձնաժողովին առնչվող դրույթներ:

ԳՐԵԿՈ-ն ուսումնասիրել է առաջարկությունները կյանքի կոչելու համար ձեռնարկված օրենսդրական միջոցները (առնչվում են նաև ակտիվների հայտարարագրերին, Հանձնաժողովի հզորացմանը՝ վարչական պատասխանատվության միջոցներ կիրառելու մասով) և եզրահանգել, որ ներկայացված զարգացումները համապատասխանում են ԳՐԵԿՈ-ի առաջարկի պահանջներին (անկախ, շարունակական և ակտիվ վերահսկողությունը՝ էթիկային, անհամատեղելիությանը և այլ գործունեությանը, շահերի բախմանը և նվերներին առնչվող կանոնների պահպանման նկատմամբ):

ԳՐԵԿՈ-ի մեկ այլ՝ XVII-րդ առաջարկությամբ խորհուրդ էր տրվում կատարելագործել խորհրդարանի անդամների, դատավորների և դատախազների համար ակտիվների հայտարարագրման գործող համակարգը՝ օրենքով սահմանելով հրապարակման ենթակա տվյալները (բացառությամբ այն տեղեկատվության, որի առնչությամբ առկա է գաղտնիության հստակ պահանջ) և ընդլայնելով հայտարարատուների շրջանակն այնպես, որ այն ներառի բոլոր դատախազներին: Այդ առումով, արձանագրվել է, որ ակտիվների հայտարարագրերի տվյալները ներկայումս առավել թափանցիկ են, բոլոր դատախազներն ունեն ակտիվների հայտարարագրման պարտականություն և վերոնշյալ առաջարկությունը բավարար չափով իրացվել է:

ԳՐԵԿՈ-ի XVIII-րդ առաջարկությունը խորհրդարանի անդամների, դատավորների և դատախազների համար սահմանված ակտիվների հայտարարագրման կանոնների արդյունավետ վերահսկման և դրանց կիրարկմանն ուղղված միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ էր: Վերջինս պետք է իրականացվեր Հանձնաժողովի գործառնական անկախության զգալի ամրապնդման, հստակ լիազորություններով օժտելու և համապատասխան ռեսուրսներ տրամադրելու միջոցով՝ հայտարարագրերի արժանահավատությունը ստուգելու, խախտումներ հայտնաբերելու, վարույթներ հարուցելու և արդյունավետ, համաչափ պատասխանատվության միջոցներ կիրառելու համար: Առաջարկի առնչությամբ, ԳՐԵԿՈ-ն ողջունում է Հանձնաժողովին վարչական պատասխանատվության միջոցներ կիրառելու լիազորությամբ օժտելը, ինչպես նաև ակտիվների հայտարարագրմանն առնչվող խախտումների համար վարչական և քրեական պատասխանատվության միջոցների ներդրումը:

Համաշխարհային Բանկն իր «Future Armenia: Connect, Compete, Prosper (A systematic country diagnostic)» Հայաստանին վերաբերող զեկույցում գնահատել է նաև գույքի և եկամուտների հայտարարագրման համակարգն ու Հանձնաժողովի կատարած աշխատանքը:

Զեկույցում նշվում է, որ Հանձնաժողովը ունի հայտարարագրերի էլեկտրոնային առաջադեմ (advanced) համակարգ, իսկ արդեն 2015 թվականից հայտարարագրերի հավաքագրման և հրապարակման մասով կարողացել է նվաճել համապատասխանատվության առավելագույն մակարդակ:

Տվյալների բազաների փոխգործարկելիությունն ապահովելու նպատակով Հանձնաժողովը բավականին ակտիվ է եղել նախարարությունների հետ համագործակցության հարցում, ինչն, իր հերթին, կնպաստի հայտարարագրերում ներկայացված տեղեկատվության խաչաձև ստուգմանը: Հանձնաժողովը նշանակալի ջանքեր է գործադրել ռիսկային վերլուծություններ իրականացնելիս:

Զեկույցում անդրադարձ է կատարված Հանձնաժողովի գործիքակազմի սահմանափակվածությանը և կոռուպցիայի կանխարգելման արդյունավետ մարմնի վերածելու նպատակով անհրաժեշտ օրենսդրական կատարելագործմանը:

Եվրոպական միության՝ «Աջակցություն Հայաստանում հանրային կառավարման ոլորտի բարեփոխումներին. առավել արդյունավետ և արձագանքող հանրային կառավարման միջոցով ծառայությունների մատուցման որակի բարելավում» ծրագրի շրջանակներում Հանձնաժողովին վերաբերել են 9 և 10 ցուցանիշները:

Ցուցանիշ 9-ի մասով ներկայացված հանձնառությունը հայտարարատու պաշտոնատար անձանց շրջանակն ընդլայնելն է և պարտականությունները չկատարելու դեպքում պատասխանատվության միջոցներ սահմանելը:

«Հանրային ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ 09.06.2017թ. ՀՕ-98-Ն օրենքով էականորեն ընդլայնվել է հայտարարատու պաշտոնատար անձանց շրջանակը՝ բարձրաստիճան պաշտոնատար անձանցից զատ ներառելով նաև հանրային պաշտոն զբաղեցնող այլ անձանց և առանձին խմբերի հանրային ծառայողների: Մինչև 2017 թվականի հուլիսի 1-ը հայտարարագրեր ներկայացնելու պարտականություն ունեին միայն բարձրաստիճան պաշտոնատար անձինք (շուրջ 800 անձ): 2018 թվականի մարտ ամսվա դրությամբ հայտարարագրեր ներկայացնող պաշտոնատար անձանց թիվն ավելացել է շուրջ 4 անգամ՝ ավելի քան 3200 անձ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով և ՀՀ քրեական օրենսգրքով սահմանվել են համապատասխանաբար՝ հայտարարագրմանն առնչվող վարչական իրավախախտումները և հանցագործությունները, դրանց համար պատասխանատվության միջոցները: Օրենքով Հանձնաժողովին վերապահվել է հայտարարագրմանն առնչվող վարչական իրավախախտումների վերաբերյալ գործեր քննելու և դրանց արդյունքներով վարչական տույժի միջոցներ կիրառելու գործառույթը:

Ցուցանիշ 9-ի մասով ներկայացված համապատասխան գործողությունները գնահատված են ամբողջովին կատարված:

10-րդ ցուցանիշը վերաբերում է Հանձնաժողովի կողմից վերլուծության մեթոդաբանության հիման վրա հայտարարագրերի վերլուծությունը և դրանց արդյունքներով ՀՀ գլխավոր դատախազության հետ համագործակցությունը: Հանձնառությունների վերջնաժամկետ է սահմանվել 2019 թվականի վերջը:

Այս պահին հանձնառության գործողություններն արդեն իսկ գնահատված են մասամբ իրականացված, քանի որ հայտարարագրերի վերլուծության մեթոդները

սահմանվել են «Հանրային ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ 09.06.2017թ. ՀՕ-98-Ն օրենքով (տվյալների մաթեմատիկական վերլուծություն, ռիսկային ցուցանիշների հիման վրա հայտարարագրերի վերլուծություն), որին համապատասխան՝ ներկայումս Հանձնաժողովն իրականացնում է հայտարարագրի լրացման և ներկայացման պահանջների պահպանման ստուգում, ինչպես նաև հայտարարագրված տվյալների արժանահավատության և ամբողջականության ստուգում:

Եվրոպական Միություն/Եվրոպայի Խորհուրդ «Գործընկերություն հանուն լավ կառավարման» ծրագրի շրջանակներում Արևելյան գործընկերության երկրներում (Հայաստան, Ադրբեջան, Վրաստան, Մոլդովա, Ուկրաինա և Բելառուս) իրականացվել է «Մասնագիտացված հակակոռուպցիոն մարմինների անկախության և գործառնական արդյունավետության» գնահատում:

Հայաստանի հակակոռուպցիոն մարմիններից գնահատվել են նաև Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդը, Հատուկ քննչական ծառայությունը, Հանձնաժողովը և Գլխավոր դատախազությունը՝ 2017-2018թթ. ժամանակահատվածի համար: Հակակոռուպցիոն մարմինների անկախությունը գնահատվել է Գիլարդի անկախության ցուցիչի հիման վրա, իսկ գործառնական արդյունավետությունը՝ ըստ մակարդակների (անարդյունավետ, սահմանափակ արդյունավետություն, միջին արդյունավետություն, առավելապես արդյունավետ, բարձր արդյունավետություն): Ըստ անկախության ցուցիչի՝ Հանձնաժողովն առավելագույն 1 միավորից ստացել է 0.87 միավոր և վերջինիս գործառնական արդյունավետությունը գնահատվել է բարձր: